ազդեցութեամբ Արմաւ հաւուն պատճառովը չատեր եկած էին Երուսաղէմ, վանդի եբրայեցի վարդապետներէն ոմանք ըսած էին թէ Նոյէն մինչև Պենտեկոստէի սուրբ օրը ԳՌ և Շ (= 3500) տարի էր. և Արմաւ հաւը(*) վեց անգամ գալով բազմած է Սիոնի բլուրին վրայ. և ան այսօր Վերնատուն կը կոչուի և անոր գեղեցկութեան համբաւը կը լսուէր ընդհանուր տիեզերքի մէջ, այդ պատճառով թագաւորներու հրամանաւ բոլոր ազգերը զայն տեսնելու եկած էին, ինչպէս Պարթևներ, Մարեր, Իլամացիք և ուրիշներ։ Ուստի նոյն տարին «է երրորդ հինգ ձիցն հաւուն տեղը եկաւ ամենասուրբ հոգին Աստուած», որ եօթնարփեան շնորհօք լեցուց բոլոր տիեզերքը և հոն արժանի եղան Սուրբ Հոգիին տեսութեան» (Ձեռ. Թ. 464)։

գ) Առաքելոց լեզուախօսութիւնը. — Առաքեալները երբ Հոգեգալստեան օրը նստած էին Վերնատան մէջ, Ս. Հոգիին ազդեցութեամբ ընդունեցին լեզուախօսութեան շնորհը։ Լամբրոնացին իր «Ներբողեան սասցեալ ի հրաշափառ Գալուստ Հոգւոյն Սրբոյ» ճառին մէջ (էջ 300-301) կը յիշատակէ Առաքելոց լեզուախօսութիւնը հետևեալ կերպով. «Զի որք երէկ եւ այսօր արք Գալիլիացիք գռեհիկք և չինականք՝ ահա ասեն՝ իբրև զիմաստուն հելլենացիս ճարտարաբանեն. և այլք

(*) Արմաւ հաւը փիւնիկ հաւն է։ Անոր աւանդութեան մասին Տօնականին եւ Մխիթար Գօշի առակներուն մէջ (էջ 123) կը կարդանք հետեւեալը. «Ձծա, Արմաւ նոյն է ի ծախել եւ ի ծնանիլ։ Նշանակ է Տեառն, զի նոյն է նախ քան զչարչարանս, եւ զկնի չարչարանաց, նմանապէս եւ յարութեան մեր, զի նովին մարմնով յարնեմք՝ որով եւ մեռանիմք, նա եւ հնմարտութիւն մի է ի սկզբան եւ կատարածին»։